ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

N 457 – Ա | 13 սեպտեմբերի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի հունվարի 23-ի N 30-Ա հրամանի պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2021 թվականի սեպտեմբերի 16-ին իմ ղեկավարությամբ անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղի ժամանակ» թեմայով:
2. Շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Գևորգ Գալստյանին:
3. Հաստատել՝
   1) շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
   2) շտաբային ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.
   3) շտաբային ուսումնավարժության մտահղացման բացատրագիրը՝ համաձայն N 3 հավելվածի.
   4) շտաբային ուսումնավարժության անցկացման պլանը՝ համաձայն N 4 հավելվածի.
   5) շտաբային ուսումնավարժության իրավիճակի զարգացման պլանը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) շտաբային ուսումնավարժության գործնական միջոցառումների անցկացման պլանը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) շտաբային ուսումնավարժության սխեման՝ համաձայն N 7 հավելվածի:

4. ՈՒսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ղեկավար կազմին.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարահանման հանձնաժողովին.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը.

4) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն և Գեղհովիտ համայնքների ղեկավար կազմին:

5. ՈՒսումնավարժության ղեկավարման շտաբի պետ Գևորգ Գալստյանին՝

1) ապահովել ուսումնավարժությունը նախապատրաստելու և անցկացնելու փաստաթղթերի ժամանակին մշակումը և սահմանված ժամկետներում ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց և ուժերի նախապատրաստումը՝ համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

3) ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլան» - ը:

6. ՈՒսումնավարժության մասնակիցներին՝

1) ուսումնասիրել ենթակա պաշտոնատար անձանց խնդիրներն ու պարտականությունները և կատարել նրանց հրահանգավորում.

2) ուսումնավարժությանը նախապատրաստվելու հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարված միջոցառումների մասին:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2021 թվականի սեպտեմբերի 13-ի
N 457-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀՀ Գեղարքունիքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի

ՀՀ	Պաշտոնը ղեկավարման շտաբում	փ/ծ կոչում Անուն Ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	փ/ծ գնդապետ Գ. Գալստյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ
2	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի տեղակալ	փ/ծ փոխգնդապետ Գ. Հակոբյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ
		խաղարկման խումբ	
3	խմբի պետ	փ/ծ մայոր Ա. Պետրոսյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետ
4	խմբի անդամ	փ/ծ մոյոր Վ. Գորոյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
5	խմբի անդամ	փ/ծ ավագ լեյտենանտ Լ. Պիպոյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
		վերլուծման խումբ	
6	խմբի պետ	փ/ծ մայոր Է. Խաչատրյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշպանության բաժնի պետ
7	խմբի անդամ	փ/ծ կապիտան Գ. Միրիբյան	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ
8	խմբի անդամ	փ/ծ ավագ լեյտենանտ Ա. Սեփոյան	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2021թվականի սեպտեմբերի 13 -ի
N457-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՀ Գեղարքունիքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության միջնորդական խմբի

ՀՀ	Ուսումնավարժությանն ընդգրկված մասնակիցները	միջնորդներ	
		Պաշտոնը	Ազգանուն անուն
1	Մարզային տարահանման հանձնաժողով	Գեղարքունիքի ՄՓՎ պետի տեղակալ	Գ. Հակոբյան
2	Մարզպետարանի քաղաքաշինության վարչություն, տրանսպորտի բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Լ. Պիպոյան
3	Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Ա. Սիմոնյան
4	Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն, բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ	Գ. Միրիբյան
5	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, գյուղատնտեսության և բնապահպանության վարչություններ	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ	Ա.Սեփոյան
6	Ներքին Գետաշեն և Գեղհովիտ համայնքներ	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Ա. Ալեքսանյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2021 թվականի սեպտեմբերի 13 ի
N 457-Ա որոշման

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՂԱՑՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղների ժամանակ»

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

1. Կատարելագործել մասնակիցների տեսական գիտելիքները՝ ջրհեղեղի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:
2. Կատարելագործել համապատասխան ղեկավար մարմինների, կազմավորումների և արագ արձագանքման ուժերի ունակությունները ջրածածկված գոտում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման դեպքում:
3. Ստուգել մարզի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» պլանի իրատեսությունը:

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ Գեղարքունիքի մարզպետարան, Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն, ԱԻ մշտական գործող հանձնաժողով, Ներքին Գետաշեն, Գեղհովիտ համայնքների ղեկավար կազմ:

Ուսումնավարժության անցկացման ժամկետը՝ 2021թ. սեպտեմբերի 16-ին ժամը 8^{00}-17^{00}

ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզը ներառում է Սևանա լճի ավազանը և մարզի տարածքով հոսում է 28 գետ և գետակ, որոնցից 6-ը խոշոր լեռնային գետեր են: Մարզի համայնքները հիմնականում գտնվում են լեռների ստորոտներում, ինչը հավանական է դարձնում ջրհեղեղների առաջացումը նաև այն համայնքներում որտեղով չեն հոսում գետեր: Ջրհեղեղները առաջանում են ինչպես գարնանային ինտենսիվ ձնհալի, այնպես էլ ուժեղ տեղումների հետևանքով:

I փուլ Ջրհեղեղի սպառնալիքի դեպքում կանխարգելիչ և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Տևողությունը՝ Օպերատիվ ժամանակ 16.09.2021-18.09.2021

Աստղաբաշխական ժամանակ 16.09.21 ժամը 8^{00}-12^{00}

ՄԱՍՆԱԿԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայության կանխատեսումներով սեպտեմբերի 14-ից սպասվում է առատ տեղումներ՝ անձրևի տեսքով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Մարզային փրկարարական վարչության և ստորաբաժանումների անձնակազմի ազդարարում և հավաք: Մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի և Ն.Գետաշեն, Գեղհովիտ համայնքների ղեկավար կազմի ազդարարում:
2. Սպասվող վտանգի, և անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների մասին բնակչության իրազեկում:
3. Հնարավոր ջրածածկման գոտիներից բնակչության տարահանման կազմակերպում:
4. Ջրհեղեղի սպառնալիքի դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացում:

ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021թ. սեպտեմբեր 16-ին ժամը 8^{00}-ին Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ կրտսեր հրահանգիչը՝ ստանալով սպասվող վտանգի մասին տեղեկատվություն ԱԻՆ հիդրոօդերևութաբանական ծառայությունից, զեկուցում է ՄՓՎ պետին և Գեղարքունիքի մարզպետին և վերջինիս կարգադրությամբ հայտարարում է մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի և Ն. Գետաշեն, Գեղհովիտ համայնքների ղեկավար կազմի ազդարարում և հավաք: Ժամը 09^{30} մարզպետի մոտ հրավիրվում է մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի նիստ, որտեղ ընդունվում է որոշում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը համապատասխան մասով գործի դնելու և ջրհեղեղի սպառնալիքի դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացման մասին:

Մարզի լրատվամիջոցներով կազմակերպվում են հաղորդումներ սպասվող վտանգի, և բնակչության պաշտպանության անհրաժեշտ միջոցառումների մասին: Համայնքներում

ստեղծվում են շրջիկ խմբեր, որոնք ըստ թաղամասերի բարձրախոսերով տեղեկացնում են բնակիչներին սպասվող վտանգի և անհրաժեշտ միջոցառումների իրականացման մասին:

Ընդունվում է մարզպետի որոշում վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման կազմակերպման վերաբերյալ: Կատարվում են համապատասխան ճշգրտումներ և գործի է դրվում մարզի և մասնակից համայնքների տարահանման պլանները: Կազմակերպում են վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման միջոցառումները: Կազմակերպվում են բնակչության պահեստավորած մթերքների, սերմացուի, անասնակերի և այլ նյութական արժեքների տեղափոխում անվտանգ վայրեր, ինչպես նաև գյուղկենդանիների անվտանգ վայրում ժամանակավոր պահպանումը:

Ճշգրտվում են ուժերի և միջոցների հաշվարկները, կազմակերպվում են միջոցառումներ՝ դրանց ստուգման և պատրաստականության ապահովման ուղղությամբ: Ստուգում են կապի և ազդարարման միջոցները: Մարզային փրկարարական վարչությունում իրականացվում են շուրջօրյա աշխատակարգի փոխադրման նախապատրաստական աշխատանքներ: Կատարվում է մոնիթորինգ առավել վտանգավոր տեղամասերի հայտնաբերման և այդ տարածքներում հնարավորության սահմաններում կազմակերպվում են գետերի ափերի բարձրացման և ամրացման, հուների արգելքների դուրս բերման աշխատանքներ:

Ժամը 11^{00}- 12^{00} ոսումնավարժության մասնակիցները ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները, ամփոփվում են ՇՈՒ-ի առաջին փուլի արդյունքները:

<u>II փուլ</u>՝ Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղի ժամանակ:

Տևողությունը՝ Օպերատիվ ժամանակ 18.09.2021-20.09.2021
Աստղաբաշխական ժամանակ 16.09.21 ժամը 12^{00}-17^{00}

<u>ՄԱՍՆԱԿԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ</u>

Տեղատարափ անձրևի պատճառով և Արգիճի գետի վարարման հետևանքով Ն.Գետաշեն համայնքում ջրածածկվել է մոտ 200 հա տարածք, ջրածածկման գոտում հայտնվել է մոտ 83 տնտեսութուն և 250 մարդ, իսկ Մատունի գետի ու տեղատարափ անձրևի պատճառով Գեղհովիտում ջրածածկվել է մոտ 130 հա տարածք, ջրածածկման գոտում հայտնվել է մոտ 45 տնտեսութուն և 160 մարդ:

<u>ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ</u>

1. Ջրածածկված գոտում հետախուզության կազմակերպում
2. Ջրածածկված գոտում փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:
3. Ջրի հոսքը ուղղորդող և արգելափակող պատնեշների կառուցում
4. Անօթևան բնակչության կենսապահովման կազմակերպում

ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տրվում է կարգադրություն ջրածածկված գոտում հետախուզություն անցկացնելու վերաբերյալ և իրականացվում է ընդհանուր հետախուզություններ, իրավիճակի մասին զեկույցներ են ներկայացվում ըստ վերադասության:

Ջրածածկված գոտում կազմակերպվում են փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական, ճանապարհային երթևեկելիության ապահովման աշխատանքներ: Կատարվում են անհրաժեշտ ուժերի և միջոցների հաշվարկ և բաշխում ըստ աշխատանքային տեղամասերի:

Կազմակերպվում է ջրի հոսքը ուղղորդող և արգելափակող պատնեշների կառուցում, օգտագործելով ինչպես ինժեներական տեխնիկա այնպես էլ ավազով լցված պարկեր: Կատարվում են անհրաժեշտ ուժերի և միջոցների հաշվարկներ, և դրանք բաշխվում են ըստ նախապես ձևավորված աշխատանքային տեղամասերի: Հաշվարկում են անհրաժեշտ նյութական միջոցների ծախսերը:

Կազմակերպվում է ժամանակավորապես անօթևան բնակչության կենսապահովումը: Նրանք ապահովվում են ժամանակավոր կացարաններով, նրանց է բաշխվում առաջին անհրաժեշտության պարագաներ և սննդամթերք: Այդ հարցում կազմակերպվում է համագործակցությունը բարեգործական կազմակերպությունների հետ:

Ժամը 15^{00}- 16^{30} ուսումնավարժության մասնակիցները ներկայացնում են երկրորդ փուլում իրենց կատարած աշխատանքները, ամփոփվում են ՇՈՒ-ի երկու փուլերի արդյունքները:

Ժամը 17^{00} հայտարարվում է ուսումնավարժության ավարտ:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«14» 09 2021թ. N 457-Ա որոշման

ՍԽԵՄԱ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ



ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 5
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2021 թվականի սեպտեմբերի 13- ի
N 457-Ա որոշման

ՊԼԱՆ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Թեման՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղների ժամանակ»

Ուսումնավարժության անցկացման ժամկետը՝ 2021թ. սեպտեմբեր 16 ժամը 8^{00}-17^{00}

Հանձնման ժամանակը	Միջանկյալի բովանդակությունը	Ով է հանձնում,	Ում է հանձնում
I փուլ Ջրհեղեղի սպառնալիքի դեպքում կանխարգելիչ և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում: Տևողությունը՝ Օպերատիվ ժամանակ 16.09.2021-18.09.2021 աստղաբաշխական 16.09.21 ժամը 8^{00}-12^{00}			
Ժ 8^{00}	Միջանկյալ թիվ 1 Հայտարարել մարզի ԱԻ-ում գործող մշտական հանձնաժողովների և Ն.Գետաշեն ու Գեղհովիտ համայնքների ղեկավար կազմի հավաք	ՀՇՈՒ ղեկավար հեռախոսով	Գեղարքունիքի ՄՓՎ դիսպետչեր
10^{10}	Միջանկյալ թիվ 2 Գեղհովիտ համայնքում առկա 1 մղանը, 1 էքսկավատորը և 2 ինքնաթափը անսարք են	միջնորդ	Գեղհովիտ համայնքի ղեկավար
10^{10}	Միջանկյալ թիվ 3 Ն. Գետաշեն համայնքում առկա 1 էքսկավատորը և 3 ինքնաթափը անսարք են	միջնորդ	Ն.Գետաշեն համայնքի ղեկավար
10^{20}	Միջանկյալ թիվ 4 Անհրաժեշտ է կայուն կապ հետախուզական կազմավորումների և իրենց վերադասերի միջև	միջնորդ	Կապի ծառայության պետ
10^{30}	Միջանկյալ թիվ 5 Վ. Գետաշեն համայնքի էլ. շչակը չի աշխատում	միջնորդ	Կապի ծառայության պետ
10^{30}	Միջանկյալ թիվ 6 Անհրաժեշտ է կատարել գետերի ափերի ամրացման աշխատանքներ՝ Վ. Գետաշեն 30մ և Ն.Գետաշեն 45մ:	միջնորդ	Մարզպետարանի Քաղաքաշինության վարչության պետ
10^{30}	Միջանկյալ թիվ 7 Ն.Գետաշեն և Գեղհովիտ համայնքների հավանական ջրածածկման գոտում ժամանակավորապես անօթևան կարող են մնալ համապատասխանաբար 250 և 160մարդ	միջնորդ	Մարզային տարահանման հանձնաժողովի նախագահ
10^{30}	Միջանկյալ թիվ 8 Հավանական ջրածածկման գոտում կհայտնվեն գյուղ կենդանիներ. Ն. Գետաշեն ՝ 135 գլուխ խոշոր 130 մանր եղջերավոր անասուններ, Գեղհովիտում՝ 110 գլուխ խոշոր 130 մանր եղջերավոր անասուններ	միջնորդ	Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
II փուլ՝ Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղի ժամանակ Տևողությունը. օպերատիվ՝ 18.09.2021-20.09.2021			

	աստղաբաշխական՝ 16.09.21 ժամը 12^{00}-17^{00}		
12^{00}	Միջանկյալ թիվ 9 Ջրածածկվել է Մ-10-ից Ն. Գետաշեն մտնող ճանանապարհահատվածը	միջնորդ	Մարզպետարան ի տրանսպոր տային բաժնի վարիչ
12^{30}	Միջանկյալ թիվ 10 Փրկարարական աշխատանքներում ընդգրկված են 120 մարդ: Անհրաժեշտ է նրանց ապահովել սննդով	միջնորդ	Մարզպետարան ի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
12^{40}	Միջանկյալ 11 Ջրածածկված գոտուց ընտանի կենդանիների տարահանման համար անհրաժեշտ են բարձր անցանելիության բեռնատարեր	միջնորդ	Մարզպետարան ի տրանսպոր տային բաժնի վարիչ
12^{40}	Միջանկյալ 12 Ջրածածկված գոտուց տարահանվել է 146 գլուխ խոշոր և 215 գլուխ մանր եղջերավոր անասուններ	միջնորդ	Մարզպետարան ի գյուղատնտե սության և բնապահպանութ յան վարչության պետ
12^{50}	Միջանկյալ 13 Միջազգային բարեգործական կազմակերպությունները հատկացրել են սննդամթերք և առաջին անհրաժեշտության պարագաներ: Անհրաժեշտ է կազմակերպել դրանց բաշխումը տուժածներին	միջնորդ	Մարզպետարան ի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
13^{00}	Միջանկյալ 14 Ն. Գետաշենի ջրածածկված գոտում գրանցվել է ցածր ճնշման գազատարի վթարի դեպք	միջնորդ	Մարզպետարան ի բնակարա-նային և ենթակա ռուցվածքների բաժնի վարիչ
13^{20}	Միջանկյալ 15 Գեղհովիտի ջրածածկված գոտում գրանցվել է ջրատար խողովակաշարի վթարի դեպք	միջնորդ	Մարզպետարան ի բնակարա-նային և ենթակա ռուցվածքների բաժնի վարիչ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 6
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2021 թվականի սեպտեմբերի 13 ի
N 457-Ա որոշման

ՊԼԱՆ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Թեման՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղի ժամանակ»

Ուսումնավարժության նպատակները՝

1. Ստուգել մարզի և ընդգրկվող համայնքների արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովների պատրաստությունը ջրհեղեղի ժամանակ բնակչության պաշտպանության միջոցառումներ կազմակերպման ուղղությամբ:
2. Կատարելագործել համապատասխան ղեկավար մարմինների, կազմավորումների և արագ արձագանքման ուժերի ունակությունները ջրածածկված գոտում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման դեպքում:
3. Ստուգել մարզի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» պլանի իրատեսությունը:

Ուսումնավարժության մասնակիցների կազմը՝

Գեղարքունիքի մարզպետարան, Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչություն, ԱԻ մշտական գործող հանձնաժողով, Ներքին Գետաշեն, Գեղհովիտ համայնքների ղեկավար կազմ:

Ուսումնավարժության անցկացման ժամկետը՝ 2021թ. սեպտեմբերի 16-ին ժամը 8^{00}-17^{00}

Անցկացման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

Ժամը		Ուսումնական հարցերը	Իրավիճակը (միջանկյալների բովանդակությունը)	Ուսուցանվողների գործողությունները	Ուսումնավարժության ղեկավարի գործողությունները	Միջնորդների գործողությունները
օպ.	Աստղաբաշխական					
1	2	3	4	5	6	7
I փուլ Ջրհեղեղի սպառնալիքի դեպքում կանխարգելիչ և հետևանքների նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում:						
օպերատիվ 16.09.2021-18.09.2021 աստղաբաշխական 16.09.21 ժամը 8^{00}-12^{00}:						
16.09 8^{00}-9^{30}	16.09 8^{00}-9^{30}	Մարզային փրկարարական վարչության և ստորաբաժանումների անձնակազմի ազդարարում և հավաք: Մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի և Ն.Գետաշեն, Գեղհովիտ համայնքների ղեկավար կազմի ազդարարում:	Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայության կանխատեսումներով սեպտեմբերի 14-ից սպասվում է առատ տեղումներ՝ անձրևի տեսքով:	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ հրահանգիչը՝ ստանալով սպասվող վտանգի մասին տեղեկատվություն ՀՀ ԱԻՆ հիդրոօդերևութաբանական ծառայության Գավառի օդերևութաբանական կայանից, զեկուցում է ՄՓՎ պետին և Գեղարքունիքի մարզպետին և վերջինիս կարգադրությամբ հայտարարում է մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի և Ն. Գետաշեն, Վ. Գետաշեն համայնքների ղեկավար կազմի հավաք: Մարզպետի մոտ հրավիրված մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի նիստին ստանում են մարզպետի որոշումը մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը համապատասխան մասով գործի դնելու և ջրհեղեղի սպառնալիքի դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացման մասին:	Տալիս է մարզի և համայնքների արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովների հավաք հայտարարելու մասին հրահանգ: Հրավիրում է ԱԻ հանձնաժողովի նիստ, ընդունում է որոշում մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը համապատասխան մասով գործի դնելու և ջրհեղեղի սպառնալիքի դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացման մասին	Հետևում են ԱԻ հանձնաժողովի անդամների հավաքի իրականացման ընթացքին: Մասնակցում են մարզի ԱԻ հանձնաժողովի նիստին, հանձնում են:

16.09 ժ 11^{00} - 17.09 ժ 22^{00}	9^{30}-11^{00}	Սպասվող վտանգի, և անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների մասին բնակչության իրազեկում:	Իրավիճակը նույնն է	Մարզի լրատվամիջոցներով կազմակերպում են հաղորդումներ սպասվող վտանգի, և բնակչության պաշտպանության անհրաժեշտ միջոցառումների մասին: Համայնքներում ստեղծվում են շրջիկ խմբեր, որոնք ըստ թաղամասերի բարձրախոսերով տեղեկացնում են բնակիչներին սպասվող վտանգի և անհրաժեշտ միջոցառումների իրականացման մասին:	Հանդես է գալիս համապատասխան հայտարարությամբ: Տալիս է կարգադրություն մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչին սպասվող վտանգի և բնակչության պաշտպանության միջոցառումների վերաբերյալ բնակչությանն իրազեկելու վերաբերյալ:	Հետևում են միջոցառումների իրականացման ընթացքին:
16.09 -ժ10^{00} - 18.09 ժ8^{00}	9^{30}-11^{00}	Հնարավոր ջրածածկման գոտիներից բնակչության տարահանման կազմակերպում:	Իրավիճակը նույնն է	Կատարում են համապատասխան ճշգրտումներ և գործի է դրվում մարզի և մասնակից համայնքների տարահանման պլանները: Կազմակերպում են վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման միջոցառումները: Կազմակերպում են բնակչության պահեստավորած մթերքների, սերմացուի, անասնակերի և այլ նյութական արժեքների տեղափոխում անվտանգ վայրեր, ինչպես նաև գյուղկենդանիների անվտանգ վայրում ժամանակավոր պահպանումը:	Ընդունում է որոշում վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման վերաբերյալ	Ուսումնասիրում են տարահանման պլանների կիրառելիությունը: Հետևում են նրանցում նշված միջոցառումների իրականացման ընթացքին: Հանձնում են միջանկյալները

16,09 Ժ10^{00}-17.09 Ժ20^{00}	9^{30}-11^{00}	Ջրհեղեղի սպառնալիքի դեպքում կանխարգելիչ միջոցառումների իրականացում:	Իրավիճակը նույնն է	Ճշգրտում են ուժերի և միջոցների հաշվարկները, կազմակերպում են միջոցառումներ դրանց ստուգման և պատրաստականության ապահովման ուղղությամբ: Ստուգում են կապի և ազդարարման միջոցները: Մարզային փրկարարական վարչությունում իրականացվում են շուրջօրյա աշխատակարգի փոխադրման նախապատրաստական աշխատանքներ: Կատարում են մոնիթորինգ առավել վտանգավոր տեղամասերի հայտնաբերման և այդ տարածքներում հնարավորության սահմաններում կազմակերպում են գետերի ափերի բարձրացման և ամրացման, հուների արգելքների դուրս բերման աշխատանքներ:	Հետևում է կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքին:	Հետևում են միջոցառումների իրականացման ընթացքին: Հանձնում միջանկյալներ
	11^{00}-12^{00}	Առաջին փուլի ամփոփում		Ուսումնավարժության մասնակիցները զեկույցներով ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները:	Ընդունում է զեկույց-ները, ներկայացնում իր դիտողությունները	Ներկայացնում են իրենց դիտարկումները
<u>II փուլ</u>՝ Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղի ժամանակ: օպերատիվ՝ 18.09.2021-20.09.2021 աստղաբաշխական՝ 16.09.21 ժամը 12^{00}-17^{00}						
18.09	12^{00}-13^{00}	Ջրածածկված գոտում հետախուզության կազմակերպում:	Տեղատարափ անձրևի պատճառով և Արգիճի գետի վարարման հետևանքով Ն.Գետաշեն համայնքում ջրածածկվել է մոտ 200 հա տարածք, ջրածածկման գոտում հայտնվել է մոտ 83	Ջրածածկված գոտիներում իրականացնում են ընդհանուր և հատուկ հետախուզություններ և իրավիճակի մասին զեկույցներ են ներկայացնում ըստ վերադասության:	Տալիս է կարգադրություն ջրածածկված գոտում հետախուզություն անցկացնելու վերաբերյալ:	Հետևում են միջոցառումների իրականացման ընթացքին:

			տնտեսություն և 250 մարդ, իսկ Մատունի գետի ու տեղատարափ անձրևի պատճառով Գեղհովիտում ջրածածկվել է մոտ 130 հա տարածք, ջրածածկման գոտում հայտնվել է մոտ 45 տնտեսություն և 160 մարդ:			
18.09-20.09	12^{00}-15^{00}	Ջրածածկված գոտում փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:	Իրավիճակը նույնն է	Ջրածածկված գոտում կազմակերպում են փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական, ճանապարհային երթևեկելիության ապահովման աշխատանքներ: Կատարում են անհրաժեշտ ուժերի և միջոցների հաշվարկ և բաշխում ըստ աշխատանքային տեղամասերի:	Տալիս է կարգադրություն փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:	Հետևում են միջոցառումների իրականացման ընթացքին: Հանձնում են միջանկյալներ:
18.09-20.04	12^{00}-15^{00}	Ջրի հոսքը ուղղորդող և արգելափակող պատնեշների կառուցում	Ն.Գետաշենում 3 և Գեղհովիտի 2 տեղամասերում գետը դուրս է եկել հունից և ջրի զգալի զանգված հոսում է բնակելի տարածքներով, ճանապարհներով, ցանքատարածքներով	Կազմակերպում են ջրի հոսքը ուղղորդող և արգելափակող պատնեշների կառուցում, օգտագործելով ինչպես ինժենարական տեխնիկա այնպես էլ ավազով լցված պարկեր: Կատարում են անհրաժեշտ ուժերի և միջոցների հաշվարկներ, կազմակերպում են դրանց բաշխումը ըստ աշխատանքային տեղամասերի: Հաշվարկում են անհրաժեշտ նյութական միջոցների ծախսերը:	Տալիս է կարգադրություն ուժերը ըստ ուղղությունների բաշխելու համար	Հետևում են միջոցառումների իրականացման ընթացքին:

18.09-20.04	15^{00}-16^{00}	Անօթևան բնակչության կենսապահովման կազմակերպում	Ջրի հոսքը գնալով նվազում է սակայն մեծ տարածքներ՝ այդ թվում բնակելի, շարունակում են մնալ ջրածածկված:	Կազմակերպում են ժամանակավորապես անօթևան բնակչության կենսապահովումը: Նրանք ապահովվում են ժամանակավոր կացարաններով, նրանց է բաշխվում առաջին անհրաժեշտության պարագաներ, սննդամթերք: Այդ հարցում կազմակերպում են համագործակցությունը բարեգործական կազմակերպությունների հետ:	Տալիս է կարգադրություն անօթևան բնակչության կենսապահովման կազմակերպման վերաբերյալ	Հետևում են միջոցառումների իրականացման ընթացքին: Հանձնում միջանկյալներ:
	17^{00}	Ուսումնավարժության ավարտ			Հայտարարում է ուսումնավարժության ավարտ	

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 7
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
«13» 09 2021թ. N 457-Ա որոշման

Շտաբային ուսումնավարժության սխեմա
Թեման՝ «Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը ջրհեղեղի ժամանակ»

ԴԵՂՀՈՎԻՏ

ԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ

Պայմանական Նշաններ

Հնարավոր ջրածածկման գոտիներ

Երթուղի

Համայնքային կառավարման կետ

(ՀՓՋ) ջոկատներ տեղակայման վայր

Փլուզված կամուրջ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ